

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

### ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

08.06. 2020թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

Գ.Մարկոսյան -մարզպետի տեղակալ  
Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Է.Հախվերդյանը,  
Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս.Գրիգորյանը,  
Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ  
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական  
Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական  
Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

#### Օրակարգում`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Փոխմարզպետ` Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար` Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

#### Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

#### 1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման կիսամյակային պլանների կատարման ուղղությամբ:

#### 2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին`

1-շաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ հրանի Իսլամական Հանրապետության Մազանդարան նահանգի հետ համագործակցության աշխատանքային խմբի ստեղծման և տեսակապի անցկացման վերաբերյալ, նաև առաջարկություններ Հարգիդա նահանգի հետ համագործակցության վերսկսման վերաբերյալ:

#### 3. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին, մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին`

Համատեղ ուսումնասիրել և 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել վերջնական տեղեկատվություն և առաջարկություններ Վանաձորի թիվ 7 դպրոցի տարածքի և սեփականության պետական գրանցման վերաբերյալ:

#### 4. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լ.Վարդանյանին` 1-օրյա ժամկետում

ա/ ներկայացնել տեղեկատվություն «Սպիտակի ԲԿ»-ի վերապրոֆիլավորման գործընթացի վերաբերյալ.

բ/ ներկայացնել տեղեկատվություն «Սպիտակի ԲԿ»-ի տնօրենի կողմից վերապրոֆիլավորման գործընթացին խոչընդոտելու կամ խանգարելու վերաբերյալ:

**5. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝**

ա/ 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ ազոտական պարարտանյութի օգտագործման արդյունավետության և դրա հետևանքների վերաբերյալ.

բ/ հողաշինության և հողօգտագործման բաժնի պետի հետ համատեղ ուսումնասիրել և ներկայացնել Դսեղ համայնքի հողօգտագործման վերաբերյալ տեղեկատվություն:

**6. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝**

1-շաբաթյա ժամկետում ներկայացնել վերջնական տեղեկատվություն Լեռնապատ համայնքի հողօգտագործման նախկինում տրված հանձնարարականի կատարման վերաբերյալ:

**7. ՀՀ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝**

Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ կայքէջի բարելավման աջակցող հանձնախումբ ստեղծելու և տարածքների համաչափ զարգացման ծրագրերի տեղադրման վերաբերյալ:

**8. ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Գասպարյանին՝**

1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Վանաձոր քաղաքում առկա խնդիրների ուսումնասիրության վերաբերյալ:

**9. ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ա.Սահակյանին՝**

Վանաձոր քաղաքի «Մորթու-մուշտակի» ֆաբրիկայի վերաբերյալ ստացված միջնորդագրի հիմքով դիմել Վանաձոր համայնքի ղեկավարին՝ առաջարկելով գործուն միջոցներ ձեռնարկել օրենսդրությամբ սահմանված կարգով գումարի մուտքագրման աշխատանքների իրականացման ուղղությամբ:

 Invalid signature



ԱՆԴԻՅՅ ՂՈՒԿԱՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան  
Հեռ. 0322 /4-32-99/